682 Գիտե՞ք ես երբ եմ կյանքը հասկանում.

1. Գիտե՞ք ես երբ եմ կյանքը հասկանում.
Երբ արգելքներն են ճամփիս շատանում,
Երբ փորձությունն է ինձ հեռու տանում,
Երբ ինձ մարդիկ են իրենցից վանում:

Հենց այդ պահին եմ կյանքը հասկանում,
Տե՛ր իմ, այդ Դու ես ինձ սովորեցնում,
Հենց կյանքի իմաստը Դու ես, Տե՛ր Հիսուս,
Քեզ վստահողը չի մնա անհույս:

2. Երբ նեղանում է ճամփաս ընդարձակ
Ու երբ կապվում են ձեռքերս արձակ,
Երբ որ բերանս են փակում անտեղի,
Երբ մեղրի տեղակ տալիս են լեղի:

3. Երբ հակառակ են գնում գործերս,
Երբ ձախողվում են բոլոր փորձերս,
Երբ կոտրվում է սանդուղքն իմ սարքած,
Եվ փուշ է հագնում արտը իմ հերկած:

4. Երբ ինձ տեսնում եմ խիստ դատապարտված,
Մանկան դեմ անգամ՝ անզոր ու պարտված,
Երբ որ քանդում են պարիսպներս ամեն,
Որ «ես»-իս տանեն ու խաչին գամեն: